

ԵՐԱՁ

Ուսիս վերայ եկաւ հանդէիլ
Տերեն աշնան հեւալով,
Եւ այտերէն կաթիլ կաթիլ
Յօղեց արցունքն իր խրոփ:

Դեղնած, տժգո՛յն փափկութիւն,
Ո՞ւր հովն անդութ, խելադար
Կը տանի քեզ, այսպէս անտուն.
Անծանօթին վիճն անծայր:

Այսպէս, աւա՛ղ, պիտի թօշնին
Ու դալկահար պիտի յնան,
Կեանքիս բոլոր պահերն անդին,
Երազս ու տենչ անսահման:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

Ն ո Ր Ե Ր Գ Ե Ր

ԵՂԲԱՅԻ ԻՄ. ԹՈՅԼ ՏՈՒՐ...

Փուշէ դըրեր են պըսակ մը գըլխուդ,
Կայ շուրջը սրտիդ՝ պըսակ մը արդէն.
Հրեշտակը մարդէն զուր կը հայցէ գութ,
Լուռ են հող ու ծով, աշխարհ համօրէն:

Արցունքն աչքիդ մէջ՝ ահա՛ կը փայլի,
Մանիշակին վրան այդուն ցօղն ինչպէս,
Ատելութեան դէմ՝ սիրտը սիրով լի,
Սիրտը վերաւոր, բարութեան պարտէզ:

Արիւնը չիթ-չիթ ահա վը հոսի,
Կ'իջնէ այտերէդ ձեռքիդ վըրան հեղ,
Որ մանուկն օրհնեց, աղբիւրին լոյսի
Մարդերուն բացաւ աչքերը անտես:

Կը հոսի արիւնդ, արցունքդ հըրակէզ,
Աշխարհի առջեւ լուռ ես, դալկադէմ.
Թոյլ տուր, Եղբայր իմ, որ գըրկեմ ըզքեզ,
Եղբայր իմ, թոյլ տո՛ւր որ ձեռքդ համբուրեմ:

ՀՐԱՁ ՔԱՋԱՐԵՆՑ

ՔՈՒ ՀՈՒԻԴ

Ո՛վ ընթերցող, խորհուրդներէդ ալ անդին
Հողի մ'ունիս աներեւոյթ, անսահման,
Որ խունկի պէս, բուրումներով երկնային
Քեզ կը պատէ քօղի մը մէջ ոսկեման:

Շողն է թերեւս արեգակի մ'անծանօթ
Որ օր մ'իջաւ մարմինիդ մէջ բիւրեղեայ.
Գեղեցիկ է կեանքիդ այդ նոր առաւօտ,
Մարմինըդ վարդ, հողիդ ճերմակ մանանայ:

Դուն ալ բացիր քու ներաշխարհդ մարդկութեան
Շարահանի էջերուն պէս բիւրածալ.
Դուն ուրիշ ես, թէ հազարներ աշխարհ դան,

Դուն ուրիշ ես, քեզ չեմ կրնար մոռանալ
Քու հողիդ է իմ հողիս հայելին,
Մեր երկուքիս խորհուրդներէն ալ անդին:

ԿԵԱՆՔԻ ՎԱՅԻԿԵԱՆ

Գեղեցիկ է մեր կեանքին մէջ վայրկեանն այն
Որ խոյս կու տայ շողի մը պէս թեւամփոփ.
Կ'ուզէի միշտ զայն ընծայել մարդկութեան
Որ կը սպասէ ամէն սրտի մէջ ըսփոփ:

Եւ նա կ'անցնի յոյս մ'ամէն օր տանելով,
Ուրիշ աչքեր ազդուութեամբ օծելու.
Եւ ո՛վ գիտէ ո՛ր հէզ սրտին հըպելով
Երազ վու տայ անոր անցքին սպասելու:

Այդ վայրկեանն է որ կը տենչան շատ մարդիկ,
Սիրտ մ'ունենալ զայն դարունով պճնելու.
Բայց նա կ'անցնի իրիկուան պէս գեղեցիկ՝

Տալով մեզի լոկ մանկութիւն տենչերու:
Գեղեցիկ է մեր կեանքին մէջ վայրկեանն այն
Որ կը փոխուի յիշատակի մշտնջեան:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ